ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ալավերդի համայնքի կարիքների համար ասֆալտապատման աշխատանքների ձեռք բերման նպատակով կազմակերպված **ԼՄԱՀ- ՀԲՄԱՇՁԲ-25/6-2** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 06.10.2025թ կնքված **ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/6-2** պայմանագրում 2026 թվականի 04. 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1- Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 714-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը և Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունը ,համաձայնագրի կողմերի փոխադարձ համաձայնությամբ ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/Є-2 ծածկագրով գնման պայմանագրում որոշվեց ,որ իրականացվող աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերում կատարվող փոփոխությունների հետ կապված ,նախատեսված կատարվելիք աշխատանքները դադարեցնել 40 օրացուցային օր ժամկետով:

Փոփոխության նկարագրություն – Նախատեսված կատարվելիք աշխատանքները դադարեցնել 40 օրացուցային օր ժամկետով:

Փոփոխության հիմնավորում - Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N-526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Պատվիրատու՝ Ալավերդու համայնքապետարան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
Ի ԼՐՐԻՄՆ ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/6-2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք.Ալավերդի 16.04.2026թ.

Ալավերդու համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Թումանյանի ՃՇՇՁ>> ԲԲԸ-ը, ի դեմս տնօրեն Մ.Տիտանյանի,որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկա

1.1Հիմք ընդունելով Քաղաքացիական օրենսգրքի 714-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը և Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ կա անհրաժեշտություն իրականացվող աշխատանքներրում նախագծանախահաշվային փաստաթղթերում կատարվող փոփոխությունների հետ կապված համաձայնագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/6-2 ծածկագրով պայմանագրով նախատեսված կատարվելիք աշխատանքները դադարեցնել 40 օրացուցային օր ժամկետով: Աշխատանքների ընթացքը կվերսկսի կապալառու կազմակերպությանը գրությամբ տեղեկացնելուց հետո:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրի մեկնաբանման, իրագործման կամ կիրառման ժամանակ ծագած տարաձայնությունները, ինչպես նաև համաձայնագրից բխող բոլոր հարցերը լուծվում են երկկողմ բանակցությունների ճանապարհով, համաձայնության չգալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.2 Սույն համաձայնագիրը գործողության մեջ է մտնում ստորագրման պահից, հանդիսանում է ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/6 -2 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը :

2.3 Պայմանագրի ՝սույն համաձայնագրում չնշված կետերը մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից, հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակից յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1	<<Թումանյանի ՃՇՇՁ>>ԲԲԸ
Ալավերդու համայնքապետարան	ք.Ալավերդի Հաղպատ կ/կ
ՀՀ ֆինանսների Նախարարության Գործառնական	ՀՎՀՀ 06600269
Վարչություն	<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>>ԲԲԸ
ՀՎՀՀ 06967886	Հ/Հ220323333710000
Հ/Հ 900262504021	Տնօրեն՝Մ.Տիտանյան
Հ/Հ 900262000996	
Համայնքի ղեկավար՝ Դ.Ղումաշյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ